

Համար կոչուած մարդը։ Դարու գողրոց սկանութիւնը և կոպտութիւնը ժանգով ծանկեցին նորա տրամարանութիւնը, Երեակայութիւնն ու յափշտակութիւնը, նորան մոլոր ցըին փոխարերութեանց շափականցութիւններով։ Այսպիսի զեղծման կամ հրապութիւն ենթարկուած՝ նա չը կարողացաւ ոչ մի կատարեալ երիամիրութիւն ստեղծել։ Նա կամ դրդուած գործանական հանգամանքի և անմիջական ատելութեան ազդեցութիւններով գրել է միայն օգտաւետ պարուաւագրեր, կամ ոգեսորուելով մեծ գաղափարի և հանճարեղութեան բովեական բորբոքման՝ ստեղծել է լոկ հատուածոյ գեղեցկութիւններ, Բայց և այս ցիրուցան բեկորների մէջ մարդը երեւում է իւր բնական մշտութեամբ։ Պարսւաւայրի մէջ ևս արտայայտուում է կարգաբանութեան և քնարերգական ուղղութեան ոգին, ինչպէս որ յետոյ աւելի կատարելութեամբ երեցաւ վիպասանութեան մէջ։ Մի տեսարանի ամբողջական ազդմունքը խոր զգացմունքով կրելու և ամննայն մասերով միանուագ պայծառութեամբ ըմրունելու կարողութիւնը՝ Միլտոնի այդ երկու մասանց մէջ ևս միակերպ արտայայտուում է, և դուք իսկոյն կը տեսնէք Կոբառելու Դրեմուի և Կամուսի մէջ այն, ինչ որ արդէն գտաք Խորանի ծննդեմունքուն և Հայուն կամունքուն։ Հայուն կամունքուն և Հայուն կամունքուն։

(Շաբաթ) Ս. ԱՅԱՆԴԻՆԵԱՆ

## ԱԶԳԱՑԻՆ

Այս ապրիլ ամսոյ 6-ին, Ս. Աստուածածնի Աւետման նախիրնթաց օրը, Ս. Էթմիածնում սկսուեց Մայր Տաճարի վերանորոգութեան գործը՝ առաջնորդութեամբ ճարտարապետ Պ. Սալամբէկեանի և համեմատ նախագծի։ Նոյն օրն սկսուեց նաև նոր Տպարանի հիմնարկութիւնը։ Առաջիկայ համարում կաշխատենք տալ աւելի մանրամասն տեղեկութիւն։

Մայր Աթոռոյս տպարանում լոյս տեսաւ «Վիճակագրական տեղեկութիւնք եկեղեցական - ծխական ուսումնարանաց Հայոց, վիճակացն Տփխեաց, Երեանայ, Աստրախանայ, Արցախոյ և Շամախոյ ոյ, հանդ երձ պատճէնիւ Կոնդակի Վեհափառ Հայրապետի ազգիս, ևս և այլ և այլ կարգադրութիւնք արարեալք ի նորին Արբութենէ վասն բարեկարգութեան յիշեալ ուսումնարանաց։ 1886—1887 ուսումնական տարի»։ Զնայելով տպագրական մի քանի թերութեանց, այս գրքուկը շատ հետա-

քրերական է և տարեց տարիի կկատարելագործութիւնը գրագու-  
կից տեղեկանում ենք որ անցեալ 86-87 ուսումնական տա-  
րուայ ընթացքում ունեցել ենք վերոյիշեալ 5 թեմում 111  
տարրական դպրոց, 227 դաստիրանական բաժանմունքով, Ուսա-  
նելիս են եղել 4472 տղայ և 3017 աղջիկ - ընդամենը 7519:  
Ըստ կոչման կամ ծոգման աշակերտ և աշակերտուէիք բա-  
ժանում են հետեւեալ կերպով: Առաջին տեղն են բռնում առ.  
Հետաւորաց որդիքը (2497), փոքր ինչ նուազ թուով վաճա-  
ռականացը (2425), յետոյ գալիս են երերագործների որդիքը  
(1929): 306 էլ հոգեւորական ծագումիդ, 173 աստիճանաւորի  
որդիք և վերօնապէս 105 ազնուական: Ուսուողիների և վար-  
ժուհիների թիւն է եղել 344, որոնցից 51ը քահանայ: Տարրա-  
կան դպրոցների ընդ հանուր մուտքն է եղել 165, 624, 14 կ.  
իսկ ծախսը 143, 179, 45 կ.

Թեմերից առաջին տեղն են բռնում Տփիւխն ու Երևանը, իսկ  
Արդախուռ բազմահայ թեմն ունի միմիւյն 10 տարր. դպրոց:  
Երկրագործ դասի որդիների համրամատական սակաւաթիւ լի-  
նելը (1925) պարզ ապացոյց է, որ գիւղերում դպրոցներ շատ  
քիչ կան:

Մայր Աթոռիս տարրանում լոյս տեսաւ «Կրօնական - բարո-  
յական խորհրդածութիւններ, աստուածնիրութեան, առագի-  
նութեան և բարեգործութեան եռանդ արծարծելու համար».  
Թարգմանեց Գերմաներէնիդ Գեր. Գրիգոր Եսիսկոպոս Աղա-  
փիրեանց, միաբան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի և վանահայր  
վանուց Ս. Թովմայի Առաքելոյ, որ յԱգուլիս: Հուտոր Ա. Երկ-  
րորդ տպագրութիւն (արտատպած Արարատ ամսագրիդ 1883—  
1887): Այս Ա. հատորը բովանդակում է 13 գլուխ, որոնք մի-  
մեանցից անկախ են, ուստի և առանձին առանձին կարելի է  
կարդալ: Գլուխների պարունակութիւնն է՝ Ապերախտութիւն,  
Անմահութիւն, Աշխարհս յաւիտենական կեանքի հայելին է,  
Յաւիտենական կեանքի վերայ մոածութիւն, Մաքուր հրգին  
Աստուած կտեսնի, Մեղաւորի յաղթանակը, Երկրաւոր բազ-  
դաւորութեան բարիքը, Առաքինի մարդու յաղթանակը, Մարդս  
և իւր գործն, Մարգիս իւր և ուրիշների ունեցած արժանա-

ւորութիւնը, Բաղդաւոր լինելու արուեստը, Ուրիշների հետ չկառավարուող մարդը, Տարւոյ վեր՞ը—Գրքի հեղինակն է Գերմանացի նշանաւոր Զոկկէն, իսկ Սրբազն թարգմանիչը Հիանալի պարզ լեզուով և բուն հայադրած մտքով տալիս է այդ գեղեցիկ երկասիրութիւնը հայ ընթերցովներին։ Հեղինակն իւր զբքի նպատակը որոշում է այսպէս։ «Իմ նպատակս մի ուրիշ և մի աւելի բարի ու լաւ նպատակ է, և ուրախ որտով մի օր ատքս կփակեմ աշխարհիս, մահուան գիրկն ընկնելով, եթէ որ իմ նպատակիս գոնէ մի փոքրիկ մասին հասած լինիմ։ Եւ իմ նպատակս այս է՝ ընտանեկան բարեպաշտութիւնով արծարծել ու նորոգել ճշմարիտ քրիստոնէութիւնը։»

«Որովհետեւ ոչ մի բան այնչափ վատ չէ տրամադրում մեր սիրտը մնայուն բարեպաշտ մաքեր և գեղեցիկ ու քրիստոնէական գործեր ունենալու, որչափ որ զբոյցն Աստուծոյ հետ՝ միայնութիան ժամանում, որպէս մէջ մեր հոգին կապսւած լինելով ուրիշ ամեն հոգմերի, կեանքի ամեն զբաղմունքների հետ, դառնումէ դէպի իւր յաւիտենական Հայրն ու միայն նորան է պատկանում։ ոչ սի բան երբէք այնպէս չէ աւելացնում լնտանեկան բաղդաւորութիւնն, որ ամենի սիրտը լցնումէ հոգեոր վսեմ՝ ուրախութիւնով ու գոհութիւնով այն ժամանակն, երբ որ հայրը, կամ մայրն իւրեանց սիրելի զաւակների շրջանի մէջ խօսում են շատ վսեմ առարկաների վերայ, ամեն մի հոգւոյ սրբարանի վերայ, Աստուծոյ և նորա արարածների, Յիսուսի Քրիստոսի աւանդած կրօնի ճշմարտութիւնների վերայ, յաւիտենական կեանքի և յաւիտենական կեանք ունենալու համար ստեղծուած հոգւոյ ակնկալութեանց վերայ։ Մի հանգստաբեր խաղաղութիւն է տարածւում այդպիսի խօսակցութիւններից յետոյ ընտանեաց սրտի մէջ, —սիրտը շարժելուց յառաջ եկած մի արտասուք՝ շատ անգամ պնդացնում ու հաստատումէ այսուեղ միացած սրտերի կապն ու միաւթիւնն՝ այս աշխարհիս վերայ Աստուծոյ հաճոյ կերպով գործելու, որ յաւիտեան արժանի լինին Աստուծոյ։ Ովոր այս երջանկութիւնն արդէն զգացել է, իմ խօսքիս ճշմարտութիւնն էլ կզգայ. —իսկ ով ո՞ր երբէք չէ զգացել ինչու այդպիսի մարդն, որ ամեն տեսակ բաղդա-

ւորութեան ծարաւ է, ջանք չի անում այն միակ բաղդաւորութիւնը ձեռք բերելու, որ կեանքի ոչ մի արկած չէ կարող իրանից խլել, այլ միայն աւելացնել ու ազնուացնել:,

Իսկ թարգմանիչն աւելացնումէ. «Նուաստութեանս թարգմանած քրիստոնէական բարեպաշտութեան վերաբերեալ մեծապէս հրահանգիչ խորհրդածութիւններն ամենայն յարգանօք յիշելի Գերմանացի Զոկկէ անուն աստուած ասէր և մարդասէր հեղինակի վեց հատոր գրուածներից՝ արժանի են ամենայն ուշադրութեան ամենայն քրիստոնեայ ազգաց և մանաւանդ մերազնէից, որովհետեւ իւր հեղինակութեանց մէջ շատ և շատ մուլթ մնացած տեղերն կրօնի և հաւատալեաց, այն է՝ աստուածութեան, քրիստոնէական ճշմարտութեանց, առաքինութեան, և բարի գործոց, իմաստնաբար ու գեղեցիկ կերպով բացառել է նա քրիստոնեայ հոգիների և սրաերի համար: Դորա մեծախոհ և բաղմանշան գրուածները, թէև Գերմանացւոց համար են, բայց ոչ աննշան կշիռ ունին նաև ամենայն քրիստոնեայ ազգաց և առաւելապէս՝ ազգիս համար, որոնք ծարաւի են՝ իբրև կենդանի ջրոյ՝ ամենակարևոր, պարզ, յստակ և զիւրըմբոննելի տեղեկութեանց՝ վերաբերեալ Աստուծոյ, աշխարհիս Փրկչի, իւր վարդապետութեամբն վերանորոգած մարդուն, նորա կեանքին և ամենայն գործոցն այս աշխարհիս մէջ: ,

Գիրքը նուիրուած է Նորին Վեհափառութեան անուան, Յոյս ունինք որ նոյն իսկ նոքա, որոնք չեն սիրում՝ կրօնական բովանդակութեամբ գրքերի լնթերցանութիւնը, մի անգամ համնառնելուց յետոյ, ծայրէծայր և ամենայն բաւականութեամբ պիտի կարդան Արքազան Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանի այս հատորը:

Հայուհեաց ընկերութեան Վարչութիւնը խնդրումէ հրատարակել հետեւեալը.

### ՀԱՇԻՒ ԵԼԵՒՄՑԻՑ

Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Թիգիղում՝ սկսեալ  
Մարտի 1ից 1887թ. ց 1ն Մարտի 1888թ.